ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ
«14» ապրիլի 2025 Թ. ԺԱՄԸ՝ 18:30

N	Խմբակցության անվանումը	Ավագանու անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Ստորագրությունը	Ստորագրման ժամը	Նշումներ
1	«Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք	Հարությունյան Դավիթ Խաչիկի		18:30	
2		Ավագյան Վարդան Արծրունու		18:30	
3		Բայաթյան Արշավիր Հրանտի		18:30	
4		Վարդանյան Արմեն Անտոնի	բացակա		
5		Հովհաննիսյան Ծովինար Լյուդվիգի		18:24	
6		Բաբայան Աստղիկ Հենրիկի		18:25	
7		Սարգսյան Գրիգոր Ալբերտի		18:13	
8		Նազարյան Եղիշե Մովսեսի	բացակա		
9		Մկրտչյան Թամարա Վարբակեսի	բացակա		
10		Սարգսյան Էմիլ Էմանուելի		18:37	
11		Սարգսյան Ծովինար Հայկի		18:26	
12		Մովսիսյան Դավիթ Էդվարդի		18:35	
13		Հովհաննիսյան Նեկտար Ղևոնդի		18:30	
14		Վարդանյան Ռոմիկ Արմենի		18:30	
15	«Քաղաքացիական պայմանագիր»	Ներսիսյան Մուշեղ Գագիկի	բացակա		
16		Ոսկանյան Սամվել Ռազմիկի		18:30	
17		Մարգարյան Սոնա Մոլոտի	բացակա		
18		Մանասերյան Կարեն Մայիսի	բացակա		
19		Շահբազյան Մարատ Վոլոդյայի	բացակա		
20		Նազարյան Տիգրան Մովսեսի	բացակա		
21	«Ապրելու երկիր»	Վարդանյան Վահե Հրաչիկի		18:30	

Աշխատակազմի քարտուղար՝ _____ Մարինե Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **14-ը ապրիլ 2025թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Եղիշե Նազարյանը, Թամարա Մկրտչյանը, Մուշեղ Ներսիսյանը, Սոնա Մարգարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը և Տիգրան Նազարյանը:

Նիստին մասնակցում էր՝ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Գառնիկ Խաչատրյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 7 նստաշրջանի երրորդ՝ 2025 թվականի ապրիլի 14-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 14-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին:

3) Եղեգնաձոր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 18-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին:

5) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 122-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

7) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:

9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից մրցույթով կառուցապատման տրամադրելու մասին:

10) Եղեգնաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:

11) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) օգտագործման տրամադրելու մասին:

12) Գագիկ Հմայակի Մարտիրոսյանին Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

13) Արա Վահանի Վարդանյանին Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

14) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:

15) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

16) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 49-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 50-Լ)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետերով, համաձայն նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի պահանջների և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքում սկսել 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2. Համայնքի 2025 թվականի բյուջեում հատկացնել 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել սոցիալ-տնտեսական ոլորտը՝ որպես առաջնահերթություն:

7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025-2027թթ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում,

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն,

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 51-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Ընդունման պահից անվավեր ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 21-ի՝ «Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» թիվ 18-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 52-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 21-ի՝ «2025 թվականի համար Եղեգնաձոր համայնքի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 122-Ա որոշմամբ հաստատված թիվ 12.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2025 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 53-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և սեփականատեր Անժելա Գասպարյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե գ**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի 7-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող, քաղաքացի Անժելա Սմբատի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.03 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 24012023-10-0016, կադաստրային ծածկագիր՝ 10-032-0082-0060) նպատակային նշանակությունը փոխելու էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ կապի օբյեկտների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 54-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք

ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և «Թավիթիան Վինյարդս» ՍՊԸ-ի լիազոր ներկայացուցիչ Վարդան Խաչատրյանի դիմումը՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի Երևանյան խճուղի 8 հասցեում գտնվող, «Թավիթիան Վինյարդս» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.0168 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 14052020-10-0004, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0128-0043) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 55-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 56-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ, 42-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 481 հոդվածի 6-8-րդ կետերի, 60-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետը՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողերից մրցութային կարգով տրամադրել կառուցապատման՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 57-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1 հա մակերեսով այլ հողատեսքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 24032025-10-0025, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0654-0002) աճուրդով օտարելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողատեսքի աճուրդի մեկնարկային գինը սահմանել 312 500 (երեք հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ (կադաստրային արժեքի 500 %-ը):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 58-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 210-211 հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի և քննարկելով «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության ներկայացուցիչների առաջարկը՝ **ավագանին ո ր ո շ ե g**.

1. Հարավային Կովկասում էկոմիջանցքների աջակցություն բնապահպանական ծրագիր իրականացնելու նպատակով՝ տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1279.6899 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը՝ համաձայն հավելվածի, սահմանափակ օգտագործման իրավունքով (սերվիտուտ) 8 (ութ) տարի ժամկետով «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպությանը տրամադրելու համար:

2. Սերվիտուտի տրամադրման տարեկան վճար սահմանել՝ 1 հա-ի համար 800 (ութ հարյուր) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	Դեմ-0	Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԳԱԳԻԿ ՀՄԱՅԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **ավագանին ո ր ո շ ե g**.

1. Գագիկ Հմայակի Մարտիրոսյանին շնորհել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԱՐԱ ՎԱՀԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Արա Վահանի Վարդանյանին շնորհել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և քաղաքացի Օնիկ Մարկոսյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Լևոնյան փողոց 50 հասցեում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 0.04526 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների տրանսպորտի հողի (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0001-0002) նպատակային նշանակությունը փոխելու բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և այն հանգամանքը, որ նշված հողատեսքը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 0.20434 հա մակերեսով արոտավայր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-015-0112-0001) այլ հողատեսքի փոփոխելու համար՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկից հանելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 63-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի մայիսի 16-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*

Նիստին ներկա ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Լարիսա Հովհաննիսյանը _____